8. Պսակադրության համար գյուղապետի՝ քöխվայի համաձայնությունը պահանջելու սովորությունը։

9. Քöխվայի կամ իր ներկայացուցչի մասնակցությունն ընտանեկան գույքի բաժանմանը։ Քöխվան իր պարտականությունն էր համարում խառնվել ընտանեկան գժտություններին։ Նա էր նշանակում անչափահաս որբերի խնամակալներին։ Այս բոլոր դեպքերում քöխվայի իրավասությունը բխում էր այն հեղինակությունից, որը նա ժառանգել էր հեռավոր անցյալից, երբ գյուղը նկատվում էր որպես արյունակցական միություն և տանուտէրն օժտված էր տոհմապետի իրավունքներով։

10. Եկեղեցու կողմից կանոնացրած օխտը պօրտը շհասությունն էլ, որով արգելվում էր ավելի մոտիկ արյունակցական ազգականություն ունեցող անհատների ամուսնությունը, պետք է համարել տոհմապետական հասարակարգի մեջ իշխող էկզոգամիայի հետնագույն արձագանք։

Զանգեզուրում գյուղական համայնքը XIX դ. սկզբներում չէր ներկայացնում արյունակցական միություն[7], և մեծ գերդաստանների միջև փոխհարաբերությունները հաստատված էին ոչ թե արյունակցական, այլ տերիտորիալ մերձավորության վրա, հարևանության սկզբունքների վրա։ Հասարակական կառուցվածքի այս ձևափոխությունը կատարվել էր Զանգեզուրում էլ, ինչպես Հայկական լեռնաշխարհի այլ գավառներում, շատ դարեր առաջ։ Արդեն միջնադարյան գյուղն այստեղ էլ մշակել էր տոհմատիրական կարգերից ժառանգած տարբեր համակեցության նորմաներ։ Նույնիսկ այն միակ գյուղում, որտեղ գրեթե բոլոր ընտանիքները միևնույն ասկից էին սերված կամ այդ ասկի հետ կապված են եղել այդ ավանդական պարտականություններով և իրավունքներով, որպես այդ ասկի ծառաներ, նօքարներ՝ այն ինչ որ մասամբ արտահայտում է գրաբարի աղխ բառը՝ Մելիք-Փարսադանյանների Բեխ գյուղում չէր վերականգնվում տոհմատիրական կառուցվածքը։ Բեխ գյուղը կազմված էր գրեթե բացառապես Մելիք-Փարսադանյանների հեռավոր և մերձավոր ազգականներից՝ Հալիձոր բերդի նախկին տերերի սերունդից, նրանց մոտ աշխատած և նրանց հետ ապրած ու նրանց ազգանունով գրանցվող ընտանիքներից։ Ծերունիների ասելով՝ այդ մելիքական տան բազմանալն էր, որ պատճառ էր դարձել Հալիձորի նեղ պատերը թողնելու և տնատեղերի համար ավելի ընդարձակ տարածության անցնելու, որի հետևանքով հիմնվեց Բեխ գյուղը։ Այդ նոր բնակավայրում այդ իշխանական տունը չէր տեղավորվել ընդհանուր տնտեսությամբ, այլ յուրաքանչյուր ընտանիք առանձնացնելով իր վարելահողերը, արոտավայրերն ու անտառամասերը, ուներ իր անջատ եկամուտները և անկախ սպառում էր դրանք ըստ իր կարիքների[8]։ Այդ տնտեսությունների փոխհարաբերությունը սահմանվում էր ոչ թե նրանց արյունակցությամբ, այլ դրկիցությամբ, մինչդեռ սպասվում էր, որ հենց այդ գյուղի ներքին կառուցվածքը կարծես բոլոր նպաստավոր պայմաններն ուներ տոհմատիրական կարգերն ամուր պահելու և նրան հավատարիմ մնալու։

Ռուսական տիրապետության հաստատման առաջին տասնամյակներում

---

[7] Մինչդեռ կովկասյան ժողովուրդների, օրինակ՝ աբխազների և օսերի մեջ հաճախ գյուղի բոլոր ընտանիքները կրում են միևնույն ազգանունը և իրար հետ կապված են լավ գիտակցված ամուր արյունակցական հարազատությամբ։,

[8] Միայն Հալիձորի պղնձահանքերը մնացին չբաժանված և մինչև հեղափոխությունը նրանցից ստացված ընդհանուր եկամուտը բաշխվում էր ազգական ճյուղերի մեջ որոշ բաժիններով։